

դիքէն, խնչպէս նաև եօթը գաւառներէ կը կազմէ նոր նահանգ մը, որ իր անունն ամենէն ծանօթ Կորդուք գաւառէն չառնուր, այլ քիչ անգամ յիշուած Կորճէք գաւառին անունէն՝ Կորճէք կը կոչուի:»

Խորենացոյ աշխարհագրութիւնը Հայաստանի մասին. Բ. Խալաթեանը կ'ըսէ, «Տարակոյս չկայ որ քաղաքական սահմանները միշտ փոփոխութիւններու ենթարկուած են, այնպէս որ փոխ առ փոխ հաստատուած և հերքուած Խորենացոյ աշխարհագրութիւնը Հայաստանը ամբողջ տարածութեամբ կը հասկնայ 189 հօլիական գաւառներու անունները, նոյն գաւառները 15 փոքր աշխարհներու ամփոփելով՝ Բարձր Հայք, Դ. Հայք, Աղձնիք, Տուրուքերան, Մոկը, Կորճէք, Պարսկա-

---

Տդ. ատխատի.) ասոնք Տիգրիսի վերին ընթացքի վրայ կը բնակէին) և իրենց մինչև Պոնտոս տարածուող դրացիներուն հետ (3, 93) 13դ. շրջանակ մը կը կազմէին :

Բայց որովհետև Մատիացիք Վանայ և Ուրմիոյ լիճերուն մէջտեղը կը բնակէին, Սասպիացիք վերին Երասխայ վրայ՝ ոչ շատ հեռու Հոյոց Սպեր գաւառէն (4). Կիւպերտ (Alte Geogr. s. 70, 75). վերին Երասխայ հիւսիսակողմը և Արփա չայիի արևմտակողմը՝ մինչև մերձաւորապէս Ուրմիոյ լճին հիւսիսային եզերքը (Sanda. անդ. 23), ուստի կարելի է ընդունիլ թէ իրենց հետ մէկտեղ 18դ. շրջանակին վերաբերող Ալարոտեանք, որոնց անունը Կիւպերտէն ի վեր՝ Ասորեստանցոց Ալարոտու և Հոյոց Արարատ անուններ մէջ գտնուած կը համարուի, միջին Երասխայ գտնուող երկիրները բռնած էին :

Ուստի Դարեհի ժամանակները Երասխայ հովիտը և Վանայ լճին արևելակողմը Սասպիացիք, Ալարոտեանք և Մատիացիք կը բնակէին. իսկ Հայերը գեռ հոն չէին բնակեր նոյն միջոցին :

Ասոնք կը վերաբերէին այն նահանգին, զոր Դարեհ իր արձանագրութիւններուն մէջ բնակող գլխաւոր ժողովող էն առնելով «Հայաստան» կոչած է :

«Հայաստանի «Արմէնիա» անունը Կիւպերտին կարծեօքը (Alte Geogr. s. 75) Մարերէն Պարսից և Յունաց անցած է : Այս անուան մինչև հիմա տրուած մեկնութիւնները (տես Murad, Ararat und Mans. 18-19. շար 79) առհասարակ զոհացուցիչ չեն :